

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS  
*Armenian Monthly*

ISSN 1682-5446



# 175 Հունվար, 2013 թ. No 175, January 2013 ۱۷۵ بهمن ماه ۱۳۹۱ شماره

# Այս համարում

## Հայերեն բաժին

- 1- Իրանահայ Համայնք.....1
- 2- Երեւանի Իշխանապետություն.....8
- 3- Արցախի հանրապետություն.....10
- 4- Արեւմտյան Հայաստան.....10
- 5- Միջազգային.....11
- 6- Մշակույթ .....13
- 7- Խոհեր.....20
- 8- Գծանկարչություն.....20
- 9- Հայերեն-պարսկերեն առածանի.....20

## Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր.....1-4

**Ճապիկի առաջին էջում՝** Հանգուցյալ Լեւոն Մինասյան  
**Վերջին էջում՝** Նոր գրքեր

Համար 175, հունվար 2013 թ.  
No. 175, January 2013  
ماهنامه لویس - شماره ۱۷۵ بهمن ماه ۱۳۹۱

# ԼՈՒՅՍ

## Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

**Էդ. Բաղդասարյան**

Փոստարկղ 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)  
Ինտերնետային հասցեն՝ [www.louysonline.com](http://www.louysonline.com)

**LOUYS**

**Armenian Cultural and Social Monthly**

License-holder and Editor-in-Chief

**Ed. Baghdasarian**

[www.Edic-Baghdasarian.com](http://www.Edic-Baghdasarian.com)

**POBox 15875-9488 Tehran – Iran**  
**E-mail : [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)**

**Internet : [www.louysonline.com](http://www.louysonline.com)**

**Թերթի Գինը՝** Հատավաճառ - 5000 ռիալ  
**Բաժանորդագրություն՝**

**Իրան՝** մեկ տարի՝ 60,000 ռիալ  
**Արտասահման՝** մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:  
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

# Ահա թե ինչեր ունեն նախագահի 4 թեկնածուները

*Փետրվարի 18-ին կայանալիք նախագահական ընտրություններին իրենց թեկնածությունն առաջադրածները ներկայացրել են իրենց ունեցվածքի մասին տեղեկություններ: Մեկական գույքի մասին հայտարարագիր ներկայացրել են միայն 4 թեկնածուներ:*

1-«Ազատություն» կուսակցության ղեկավար 54-ամյա **Հրանտ Բագրատյանը:** Նա Երեւանում Արաբկիր 25 փողոցում ունի 613 քմ տարածքով առանձնատուն, ինչպես նաեւ Սայաթ Նովա 33 շենքում 120 քմ մակերեսով բնակարան: Ավետիսյան փողոցի իր բնակարանի մակերեսն էլ 85 քմ է: Նույն հասցեում նա ունի նաեւ ավտոտնակ 16.2 քմ տարածքով, որը, հավանաբար նախատեսված է նրա «Նիսսան X-trail»-ի համար, ինչն իրեն է պատկանում 2003 թվականից: Նա որպես ԱԺ պատգամավոր տարեկան ստանում է 2 միլիոն 180 980 դրամ, Ռուս-հայկական համալսարանից՝ 1 միլիոն 73 900 դրամ, Ուկրաինայի 91 439 հրիվինա, Ֆրանսիական Perod Richard-ից, որտեղ իր մասնաբաժինը կազմում է 0.0003%, 9400 եվրո, Ամսու Ռոտունեն վարձավճարից էլ ստանում է 7 միլիոն 342 հազար դրամ: Հայտը լրացնելու դրությամբ ունեցել է 65000 հազար դոլար: Նշենք, որ նա ամուսնացած է Նանա Բագրատյանի հետ, եւ նրանք ունեն մեկ դուստր եւ մեկ որդի:

2-Նախագահի մյուս թեկնածու, «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Բաֆֆի Հովհաննիսյանն իր հայտարարագրում նշել է, որ Երեւանի Նորք համայնքի 15 փողոցում ունի տուն: Նա Երզնկյան փողոցում ունի գույք: Նշենք, որ նա ծնվել է 1959 թվականին, ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Ֆրեզնո քաղաքում: Ամուսնացած է, ունի 5 երեխա՝ Կարին, Տարոն, Վան, Շուշի, Արմեն-Ռիչարդ: Կինը՝ Արմենուհի Հովհաննիսյանը:


3-Գործող նախագահ, ՀՀԿ ղեկավար 58-ամյա Սերժ Սարգսյանը նշել է, որ ԼՂՀ Ստեփանակերտ քաղաքում ունի 96 քմ ընդհանուր տարածքով բնակարան: Նրա շարժական գույքն էլ «Միցուրիի Մոնտերո»-ն է: Ունի թանկարժեք իրեր՝ հնաճ արձանիկներ եւ քանդակներ՝ 18-20-րդ դարի, կտավների հավաքածու՝ Սարյանի, Հակոբյանի, Քոչարի, Կոչոյանի, Աբեղյանի, Խանջյանի, Մինասի եւ Բաշինջաղյանի եւ թվով 32 կտավ ժամանակակից նկարիչներից: Նախագահի աշխատավարձը տարեկան կազմում է մոտ 6.5 միլիոն դրամ: Նրա եկամուտների մեջ նշված է նաեւ, որ «Արարարտ» բանկին տված փոխառությունների դիմաց ստանում է 10 միլիոն 925 535 դրամ: Հայտարարագրի լրացման պահին նախագահն ունեցել է 108 միլիոն 400 հազար դրամ: Նշենք, որ նախագահն ունի երկու դուստր՝ Անուշն ու Սաթենիկը, երեք թոռնիկ՝ Մարիամը, Արան ու Սերժը:

4-Ինքնաառաջադրված 45-ամյա Վարդան Սեդրակյանն էլ է աչքի ընկնում իր բավական «փարթամ» ունեցվածքով: Նա Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքում ունի 0.141 հա հողամաս, նույն քաղաքի Գարեգին Նժդեհ թաղում եւ 2 սեփականություն՝ 0.16 հա մեկերեսներով: Կոտայքի մարզի Քարաշամբ համայնքի 5-րդ փողոցի 7-9 հողամասերը՝ 0.255 հա մակերեսով, նույնպես իրենն են: Նույն վարում ունի նաեւ անասնազոմ՝ 294.6 քմ-ով: Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Մարկավազի 34 հասցեում ունի 252.4 քմ մակերեսով առանձնատուն, իսկ Արաբկիր վարչական շրջանի Շիրվանզադե փողոցի 3-րդ շենքում՝ 132 քմ-անոց բնակարան:

Իրանահայ Ըամայնը

Իրանահայության մեծ կորուստը

Իր մահկանացուն կնքեց վաստակաշատ բանասեր Լեւոն Գ. Մինասյանը



2012 թ. դեկտեմբերի 31-ի կ. հ. ժամը 3:30-ին, Նոր Զուղայում, հիվանդանոցում իր մահկանացուն կնքեց Հայ Մամուլի բազմամեա աշխատակից, մտավորական, բանասեր, վաստակավոր ուսուցիչ եւ բազում ուսումնասիրական ու պատմական գրքերի հեղինակ **Լեւոն Մինասեանը**:

Ծնել էր 1920 թականին՝ Փերիայի Խոյզան գյուղում. տարրական ուսումը ստացել էր գյուղում ապա սովորել էր Նոր Զուղայի հայոց ազգային դպրոցում ու Սպահանի կոլեջում, եւ համալսառանում ռոպես ազատ լսարանի մասնակից: Մինչեւ իններորդ սովորելուց հետո՝ թողեց դպրոցն ու վերադարձավ գյուղ, ամուսնացել ու մնացել է գիւղում: Շուրջ 40 տարի պաշտոնավարել է հայոց դպրոցներում (10 տարի եղել է Խոյզանի դպրոցի տեսուչ եւ լինելով Փերիայի դպրոցների ընդհանուր պատասխանատու՝ այցելել է բոլոր գյուղերը եւ վերահասու եղել դպրոցական խնդիրներին, հետագայում ազգային դպրոցների կողմից հրավիրւել է Նոր Զուղա եւ 30 տարի պաշտոնավարել: 90 հայերէն եւ անլի քան 30 պարսկերէն ու մի քանի անգլերէն գիրքերի հեղինակ է:

«Լույս»-ը խորապես վշտակցում է հանգուցեալի հարազատներին եւ համայն իրանահայությանը:

Իրանահայությունը կորցրեց իր ամենագիտակ ու համեստ բանասերին; Հարկ եւմ համարում հանգուցյալ Լեւոն Մինասյանի վախճանումը ցավակցել մեր բոլոր ժողովրդի եւ մասնավորապես նրա ընտանիքի հետ միասին;

Ես կարդացել եւ օգտագորեմ նրա բոլոր գործերը, Ալիք օրաթերթում լույս տեսած նրա առաջին հոդվածից սկսած մինչեւ վերջին աշխատությունները:

Լեւոն Մինասյանը բառի բուն իմաստով մարդ էր, հայ էր, մարդասեր ու հայասեր, հայ մշակույթի սիրահար, իր հայրենի գյուղի ու գավառի ջատագովը, նա օգտակար էր գտնվում ցանկացած անհատի, ով նրան էր դիմում: ստացած թերթերին ու գրքերին անդրադարնում էր անխտիր, Նոր Զուղայի Մատենադարանի նյութերի երկարամյա ժառանգ կարգավորողը, ավելի քան 10,000 գավառական/պատմական նամակների դասավորողն ու ուսումնասիրողը, բազմաթիվ գրքերի հեղինակ, Իրանահայ պատմության մուծ էջերի անգուգական բացահայտող, այսպես կարելի է գրել հարյուրավոր էջեր իմ սիրելի բարեկամ եւ ավագ եղբայր՝ Լեւոն Մինասյանի մասին...

Նրա հիշատակը միշտ վար կմնա մեր սրտերում, նրա անունը միշտ կփայլի հայ գիր ու գրականությանն եւ բանասիրության մեջ:

Սիրելի Լեւոն, եթե մարմնով հեռացել ես մեզանից, սակայն քո լուսավոր պատկերը միշտ վառ կմնա ամեն գիտակից իրանահայի սրտում:

*Խնրագիր՝ Դր. Էդիկ Բաղդասարյան՝ Գերմանիկ*

Նոր Զուղայի հայ համայնքն իր վերջին հրաժեշտը տուեց վաստակաւոր ուսուցիչ եւ ազգային-հասարակական գործիչ Լեւոն Գ. Մինասեանին

Չորեքշաբթի, 09 Յունւար 2013 09:44



Թղթակից (Նոր Զուղա) - Երէկ՝ երեքշաբթի, յունւարի 8-ին, Նոր Զուղայում, հոծ բազմութեան ներկայութեամբ, տեղի ունեցաւ վաստակաւոր ուսուցիչ եւ ազգային-հասարակական գործիչ Լեւոն Գ. Մինասեանի ազգային յուղարկաւորութիւնը, որն իր մահկանացուն էր կնքել

2012 թուականի դեկտեմբերի 31-ին՝ 92 տարեկան հասակում:

Թաղման եկեղեցական արարողությունը տեղի ունեցավ առաւօտեան ժամը 11-ին, Նոր Ջուղայի Ս. Աստուածածին եկեղեցում, նախագահութեամբ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Ս. Մեպուհ արք. Սարգսեանի եւ մասնակցութեամբ՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Ս. Բաբգէն եպս. Չարեանի ու հոգեւորականաց դասի: Հանգուցեալի հարազատներից բացի՝ թաղման արարողութեանը ներկայ էին նաեւ՝ Իսլ. խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, Սպահանի նահանգապետարանի, Իսլ. մշակոյթի եւ առաջնորդութեան հիմնարկի, Սպահանի 5-րդ շրջանի քաղաքապետարանի եւ Կրօնական փոքրամասնութիւնների գրասենեակի բարձրաստիճան պաշտօնատարներ, Սպահանի հայոց թեմի ազգային մարմինների ու ենթամարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, միութիւնների եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչներ ու հոծ թուով հայ եւ պարսիկ հայրենակիցներ:



Եկեղեցական կարգի աւարտին Ս. Մեպուհ արք. Սարգսեանը հանդէս եկաւ դամբանախօսութեամբ, որից յետոյ Ս. Բաբգէն եպս. Չարեանը նախ ընթերցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա կաթողիկոսի ցուակցագիրը, ապա անդրադառնալով հանգուցեալի կենսագրական գծերին՝ իր ցուակցական խօսքն ուղղեց սգակիրներին:

Այնուհետեւ նորոգ հանգուցեալի դին տեղափոխեց եկեղեցու բակ, որտեղ կարճատեւ արարողութիւնից յետոյ դամբանախօսութեամբ հանդէս եկան՝ հանգուցեալի որդի Մեպուհ Մինասեանը՝ հարազատների, Վրէժ Շիրանեանը՝ թեմի ազգային մարմինների, Արթին Մուրադեանը՝ գաղափարակից ընկերների եւ Հայկ Հայրապետեանը՝ Փերիոյ Կրթասիրաց միութեան անունից, իսկ վերջում պարսկերէն լեզուով արտայայտեց Իսլ. խորհրդարանի պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը: Վաստակաւոր ուսուցչի դին ամփոփեց Նոր Ջուղայի հայոց ազգային

գերեզմանատանը: Վերադարձին Նոր Ջուղայի Հայ Մ. Ս. «Արարատ» միութեան սրահում հանգուցեալի հարազատներն ընդունեցին ցուակցութիւններ: Հանգիստ՝ բազմավաստակ ուսուցչի աճիւններին:

Ալիք, Թեհրան

### “Վախճանուել է Իրանահայ Բանասէր Լեւոն Մինասեանը”

Վաստակաշատ գիտաշխատող ու բանասէր Լեւոն Գալուստի Մինասեանը ոչ եւս է

Օննիկ Հայրապետեան

2012 թուականի Դեկտ. 31-ի գիշերը՝ լոյս 2013 թուականի վաղ առաւօտեան ժամերին, Նոր Տարին նոր սկսուած՝ կեանքի նոր փուլով ուղեւորուեց երկարամեայ ուսուցիչ-դաստիարակ, գիտաշխատող ու բանասէր Լ. Գ. Մինասեանը Իրանի Սպահան քաղաքի Նոր Ջուղայի իր բնակարանում:

Իրանում հրատարակուող պարսկատառ «Իրաննամե» թերթից քաղելով ներկայացնում ենք իր կեանքի ու գործունէութեան հակիրճ բնութագիրը: Լեւոն Գ. Մինասեանը ծնուել է 1920 թուականին Սպահան նահանգի Փերիոյ գաւառի Խոյզան գիւղում: Տարրական կրթութիւնը ստացել է ծննդավայրի դպրոցում, ապա միջնակարգը՝ Նոր Ջուղայի «Քանանեան» եւ Սպահան քաղաքի «Ադաբ» միջնակարգ (երկրորդական) դպրոցներում: Աւարտելով դպրոցը 1941-ից սկսեալ նետում է իր սիրած ուսուցչական ասպարէզը եւ հայոց լեզու, պատմութիւն ու գրականութիւն է դասաւանդում գաւառի տարբեր շրջաններում:

Ջուզընթաց կրթական գործունէութեան, նա հիմնում է ուսումնասիրաց, մշակութային եւ բարեգործական միութիւններ, ինչպէս նաեւ՝ մի խումբ համախոհների հետ 1945-ին Խոյզան գիւղում հիմնում է «Աբովեան»-ի անուն ցրադարանը, որը երկար տարիներ սպասարկում է գաւառին:

1951 թուականին Լ. Գ. Մինասեանը փոխադրուում է Նոր Ջուղա, ուր շուրջ 30 տարի շարունակում է ուսուցչական գործը տեղի հայկական-ազգային դպրոցներում: 1967 թուականից սկսեալ նա սիրայօժար կերպով ստանձնում է Նոր Ջուղայի թանգարանի տնօրէնի պաշտօնը, իսկ 1972 թուականին եւս նշանակուում է տեղի տպարանի տնօրէն: Ուսուցչական պաշտօնից հանգստի կոչուելուց յետոյ, 1981 թուին նրան է յանձնուում Նոր Ջուղայի գրադարան-մատենադարանի պատասխանատուութիւնը: Նրա տքնաջան եւ մասնագիտական անխոնջ աշխատանքի շնորհիւ ի մի են բերուել ու գիտականօրէն ոասումնասիրուել ու դասակարգուել Մբ. Ամենափրկչեան Վանքի աւելի քան 350 տարուայ վաղեմութիւն ունեցող բոլոր նամակներն ու փաստաթղթերը: Ժողովածուն լոյս է տեսել 1983-ին: Հանգուցեալ Լ. Գ. Մինասեանը գրել է սկսել դեռ մանուկ տարիքից: Հետագային՝ իր կրթական գործունէութեանը

համընթաց, նա իր ժամանակը տրամադրել է Փերիա գաւառի եւ Նոր Ջուղայի ազգային, կրթական, մշակութային կեանքի ու պատմութեան ուսումնասիրութեանը: Սոյն երկարատեւ ուսումնասիրութեանց արդիւնքում նա աւելի քան 700 յօդուած է լոյս ընծայել Թեհրանում հրատարակուող «Ալիք» օրաթերթում, շուրջ 300 յօդուած եւս՝ զանազան այլ թերթերում ու պարբերականներում: Նա մեծ խնամքով անհրաժեշտ փաստաթղթերն ու տուեալները հաւաքելով եւ հմուտ պատմաբանի աչքով ուսումնասիրելով՝ գրել ու հրատարակել է չափազանց արժեքաւոր գրքեր, ինչպիսին են՝ «Փերիա գաւառի 350-ամեայ պատմութիւնը», «Նոր Ջուղայում Իրանի առաջին տպարանի պատմութիւնը, 1638-1972», «Իրանահայ հաստատութիւնները», «Ցուցակ Նոր Ջուղայի թանգարանի ձեռագրերի», «Իրանի հայկական վանքերը», «Փերիոյ հայ աշուղները» (չորս հատոր), «Պատմութիւն Նոր Ջուղայի հայութեան, 1856-1996», «Իրանի հայերը», «Ճամբորդութիւն յԵրուսաղէմ», «Համառօտ ակնարկ հայ Ուղղափառ եկեղեցւոյ ծիսակատարութեան» եւ բազմաթիւ այլ աշխատութիւններ նուիրուած պատմական արժէք ներկայացնող եւ ազգային-հասարակական կեանքին վերաբերող բազմազան նիւթերի: Իբրեւ կենդանի ապացոյց, բաւական է նշել, որ 70 անուն գիրք է հրատարակել, որոնցից տասը պարսկերէն լեզուով, իսկ 60-ը՝ հայերէն: Իբրեւ գնահատանք եւ շնորհակալութիւն իր բազմամեայ վաստակի, նրան շնորհուել են բազմաթիւ պատուոյ գրեր ու տախտակներ եւ շքանշաններ անուանի համալսարանների, գիտական ու հետազօտական կենտրոնների եւ բարձրաստիճան պետական ու եկեղեցական պաշտօնատարների կողմից: Թունք նրան շնորհուած շքանշաններից մի շարք-Մեսրոպ Մաշտոցի անուան շքանշան Մեծի Տանն Կիլիկիոյ երջանկայիշատակ Խորէն Ա. Կաթողիկոսից, Մեսրոպ Մաշտոցի անուան շքանշան Երեւանի Մատենադարանի կողմից եւ բազմաթիւ այլ շքանշաններ ու պատուոյ գրեր: 1996-1997 թուին Լ. Գ. Մինասեանի անունը, իբրեւ «Տարուայ Մարդը» ներառուել է Անգլիայի «Քեմպրիճ» միջազգային կենսագրութիւնների շարքում եւ արժանացել է շքանշանի ու պատուոյ գրի: 1997-98ին եւս Միացեալ Նահանգների Հարաւային Քարոլինայի «Ո՛վ է Նա» (Whos Who) կենսագրական կազմակերպութեան կողմից ճանաչուել է իբրեւ «Տարուայ Մարդը» եւ իր կենսագրութիւնը տպուել է նոյն կազմակերպութեան հրատարակած գրքում: Առ ի գնահատանք իր արժեքաւոր վաստակի՝ 1912-ին նա արժանացել է նաեւ «Մպահանի արձանիկ» յուշանուէրին «Մպահանի բարեկամներ» միութեան կողմից, Մպահան քաղաքին նուիրուած գիտաժողովի ընթացքում: Լեւոն Գ. Մինասեանը կարճատեւ անհանգստութիւնից յետոյ, սոյն թուականի տարեմուտին կնքեց իր

մահկանացուն: Վաստակաշատ մտաւորականը, որին բախտ եւ ունեցել 1967-83 թուականներին կրթական ու մշակութային գործակից լինելու, չափազանց խոհեմ, համեստ ու անդուլ-անդադար պրպտող եւ ուսումնասիրող անձնատրութիւն էր: Նա մեծապէս արժեւորեց իր 92-ամեայ կեանքը՝ անձնուէր կերպով ծառայելով հայ դպրութեանն ու մշակոյթին, ազգին ու հայրենիքին եւ հայ համայնքին: Լեւոն Գ. Մինասեանը երդուեալ դաշնակցական էր: Նա երիտասարդ տարիքում անդամագրուել էր Հ.Յ. Դաշնակցութեան եւ մինչեւ կեանքի վերջը մնաց հաւատաւոր ու պարտաճանաչ: Յարգանք իր յիշատակին ու վաստակաբեկ աճիւնին:



**ԼԵՎՈՆ Գ. ՄԻՆԱՍՅԱՆ**  
**(Պատմաբանասիրական վաստակի ուրվագիծ)**  
 ԳՐԻՇ ՂԱՎԹՅԱՆ

Իրանահայ ազգագրական և պատմաբանասիրական գրա կանութեան երախտաշատ վաստակավոր, բազմաթիվ հրատարակութիւնների հեղինակ Լեւոն Գ. Մինասեանը անցնող ավելի քան 60 տարիների հետևողական ու նվիրված աշխատանքով ակնառու յուրովսանն է ներդրել Իրանի Նոր Ջուղա հայաքաղաքի, նրա շրջակա գավառների, մասնավորաբար Փերիա գավառի մշակութային, կրթական, հրատարակչական, ընկերային, ազգագրական, ավանդական, պատմական, եկեղեցական, ազգային-

հասարակական միությունների ու մարմինների պատմությանը վերաբերող նյութերի, աղբյուրների և ակունքների ուսումնասիրությանը նագավառում: Մի քանի նյութերի դեպքում, կապված Նոր Ջուղային ու Փերիա գավառին, նրա աշխատությունները սկզբնաղբյուրային արժեք ունեն:

Լ Գ Մինասյան նշանավոր բանասերի, հասարակական, ազգային և կրթական գործչի նկարագիրը կոփվել ու ամրացել է նրա հայրական ընտանիքինահապետական հարկի տակ. նրա մանկության ու պատանության Խոյգան գյուղի, ապա Նոր Ջուղա հայաքաղաքի Կենտրոնական դպրոցի դասարաններում ունստարանների վրա, ուր փնտրող ու որոնող պատանին էջ առ էջ, ու գիրք առ գիրք հասունացել է հայությամբ ու կրթությամբ, նվիրականություններով ու հանձնառություններով, որ կյանքի հերկվող դաշտում իր վեցկու ակոսը բանա: Եվ բացել է:

Դեռևս պատանի նա սկսում է բանաստեղծություններ գրել, ինքնուրույն, առանց մեկի խրախուսանքի: Շուտով նա սկսում է հանդես գալ Թեհրանումհրատարակվող Ալիք Օրաթերթում, որին շարունակաբար աշխատակցել է 1940 թվականից ի վեր:



Լ Գ Մինասյանի առաջին հրատարակած գիրքը՝ «Պատմագիր Ստեփանոս Երեց» հատորն է, տպված 1956 թ: Գիրքը ներկայացնում է Փերիա գավառիՀազարօրիք գյուղի Տեր Ստեփանոս Քի Տերտերյանի կյանքն ու գրականությունը. դա առաջին լուրջ ուսումնասիրությունն է նրա կյանքի ու գրական ժառանգության, որով և ճշգրտվում է նրա ծննդյան թվականը, որ մինչև այդ ենթակա էր տարաձայնության:

1964 թ լույս է տեսնում «Փերիայի հայ աշուղները» գիրքը. ցարդ հրատարակվածներից ամենաբովանդակալից աղբյուրն է, որը կազմելու համար Լ Գ Մինասյանը թե միայն ուսումնասիրել է մինչև այդ եղած աղբյուրները ու գտանելի անձնական արխիվները, այլև անձամբ շրջագայել է Փերիա գավառը, գրի է առելտեղեկություններ և երգեր ծերունիներից, գերեզմանաքարերից: Գրքում տվել է գուսանների կենսագրությունները, նրանց երգերը, պահպանել լավ բարբառայինհարազատությունը, դրանց լավագիտակ լինելու ճշտագրությամբ: Անդրադարձել է գուսանական երգերի պատմական ու կենցաղային արտացոլումներին,

տեղական ասացվածքներին: Այդ երգերը ուսումնասիրելով դասակարգել է ըստ կրոնական, պատմական, ազգազրական, խրատական, սիրային, հասարակական,ներբողական, հանելուկային, այլաբանական, մրցահամեմատական, երգիծական, զոջման-քավության և գանազան նյութերի, բնանյութերի: 1967 թ հրատարակել է «Երգասաց Տեր Կարապետ» մենագրությունը նվիրված գուսանի կյանքին ու գործին:

1971 թվականում լույս է ընծայել «Իրանի հայկական վանքերը», որ ներկայացնում է Սբ Թադե, Սբ Ստեփանոս և Սբ Ամենափրկիչ վանքերը, դրանց՝ այդթվականի իրավիճակով:

Կոթողական աշխատություն է «Պատմություն Փերիայի հայերի» հատորը, սկզբնաղբյուրային արժանիքով, հրատարակված 1971 թվականում, որ ընդգրկում է1606-1956 պատմաշրջանը: Կարելի ամենալրիվ պատմության հետ այնտեղ տրված է նաև Փերիա գավառի փոխհարաբերությունները Նոր Ջուղայի և գավառներիհայ գյուղերի հետ: Այս հատորը հարազատ օղակն է այն պատմագրության, որ սկիզբ առավ Առաքել Դավրիժեցու պատմությամբ՝ 1602-1662 թթ, շարունակեցՍտեփանոս Երեցը՝ 1665-1789 թթ, ապա Նոր Ջուղայի երախտավոր պատմագիր Հարություն Տեր Հովնանյանը՝ 1605-1870 թթ, և արդ՝ Փերիա գավառիերախտավոր պատմագիր Լ Գ Մինասյանը:

Հայ տպագրության պատմության մի շքեղ էջն է ներկայացնում «Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը» հատորը, լույս տեսած 1972 թ: Այդ տպարանը,հիմնադրված 1636-7 թթ, Խաչատուր Վարդապետ Կեսարացու միջոցով, առաջին տպարանն է Միջարևելքում, ներառյալ Հայաստանը և Կովկասը: Իսկ ի սփյուռսաշխարհի՝ եղած տպարանների յոթերորդն է: Գիրքը պարունակում է տպարանի տպած գրքերի ցանկը 1638-1972 թթ, որ աժեքավոր ու հետաքրքրական է:

Սկզբնաղբյուրային արժեք ունեցող հատոր է «Պատմություն Փերիո Հայոց Հիվանդանոցի» գիրքը, տպագրված 1973 թ, ուր տրված է հիվանդանոցիհիմնադրությունը, նրա 30 ամյա գործունեությունը 1942-1972 թթ, որ հանդիսացավ ամբողջ գավառի, ներառյալ պարսիկ և մուսուլմանացած վրացի գյուղերը,առաջին հիվանդանոցը, ուր վառվեց գավառի առաջին էլեկտրալույսը, ուր զրնգաց գավառի առաջին հեռախոսը: Հիշյալ տարիներում գավառի համատարածհետամնացության մեջ հայերը եղան նման առաջադիմության քայլեր անողները, առանց պետական, կամ օտարի օգնության, հենց նույն գավառից ելածփոքրաթիվ անհատների միասնական ջանքերով: Լ Գ Մինասյանը իր պատանության՝ մոտից ծանոթ ու ակնատես է եղել այդ արժանավոր իրագործումին,այնտևհետև իր լավատեղյակությամբ, այլև փաստաթղթերի ու արձանագրությունների հիման վրա, կազմել է Փերիո Հայ

ոց Հիվանդանոցի և նույնանուն միությանամբողջական պատմությունը:

1978 թ լույս է տեսել «Համառոտ պատմություն Փերիտ Կրթասիրաց Միության» գիրքը, ուր տրված է գավառի հայոց դպրոցների կարիքների և ուսուցչական ուժերատակարարող միության հիսնամյա գործունեությունը 1928-1978 թթ.:



Բովանդակությամբ կարևոր գրքույկ է «Օտնոթագրություններ Նոր Ջուղայի պատմության Ա և Բ հատորների» աշխատությունը, որ լույս տեսավ 1980 թ: Լ ԳՄինասյանը դրանով պատմական կարևոր ճշտումներ է կատարում Նոր Ջուղայի պատմության մեջ եղած աղբյուրային անճշտությունների ու սխալների:

«Դիվան Սբ Ամենափրկչյան Վանքի 1606-1960 թթ» հատորը արդյունքն է տասը տարիների անխոնջ աշխատանքի, որով Լ Գ Մինասյանը մեկ առ մեկ կարդացել, ուսումնասիրել, դասակարգել ու ցանկագրել է Նոր Ջուղայի վանքի 354 տարիների հազարավոր ձեռագրեր, գրություններ, կայսերական, թագավորական ու պետական հրամանագրեր ու օրինագրեր, փաստաթղթեր, որոնց մեջ գտնվում են նաև ազգային թանկարժեք գրություններ. ինչպես 1787 թ հայ պարբերականամսուկի հիմնադիր Հարություն Քահանա Շավոնյանից.

1829 թ մեր ոսկեդենիկ աշխարհաբարի ռահվիրա՝ Խաչատուր Աբովյանից.

1833 թ դասական վիպասանն ուղեգիր՝ Մեսրոպ Թաղիադյանից.

1861 թ Վասպուրականի և հայ հեղափոխության արծիվ՝ Խրիսյան Հայրիկից.

1880 թ հայ ազատագրական պայքարիմտորողներից՝ Մկրտիչ Հովսեփ Էմինից.

1887 թ հայ հեղափոխության ռահվիրաններից՝ Մկրտիչ Փորթուգալյանից.

1887 թ մեծ ծովանկարիչ՝ Հովհաննես Այվազովսկիից.

1902 թ հայ թատերգության դասական՝ Շիրվանզադեից.

1911 թ Իրանի սահմանադրության հայ հերոս՝ Եփրեմ Խանից.



1920 թ ամենայն հայոցբանաստեղծ՝ Հովհաննես Թումանյանից. 1927 թ անմահ երգահան՝ Ռոմանոս Մելիքյանից. 1948 թ հայ գրականության թույն Արամազդ՝ Ավետիս Ահարոնյանից, նայլն: Առաջին հատորը հրատարակվեց 1976 թ, լրացուցիչ հատորը՝ 1983 թ:

Շուրջ չորս դարյա բացօթյա թանգարան է Նոր Ջուղայի հայոց գերեզմանատունը՝ հանգստարանը: Դրա մասին հավաքած հսկայական նյութերի միասնամանավակ մասը օգտագործելով, Լ Գ Մինասյանը, ըստ նույն գրքույկի «Երկու լ խոսքում» տրված բացատրության, ներկայացնում է հանգստարանը միջնդհանուր ակնարկով. միաժամանակ տալիս է որոշ տեղեկություններ և պատմական տապանաքարերի արձանագրությունների նմուշներ: Ցանկալի է լրացուցիչհատորով լրացնել բացը, մանավանդ որ նյութերը հավաքված են ըստ էության:

Հայ արհեստավորների շնորհալի հանրաշարքում հայ ոսկերիչները, դարերի ընթացքում, ունեցել են համաշխարհային ճանաչում.

«Ոսկերչությունը ՆորՋուղայում» հատորը, թեև բացթողումներով, այնուամենայնիվ ներկայացնում է ազգային պարծանքի այդօրինակ մի լուսավոր էջը. գիրքը լույս է տեսել 1983 թ:

Այսպես կարելի է ցանկագրել ու բնութագրել Լ Գ Մինասյանի բազմաթիվ ուսումնասիրությունների հրատարակությունների խորագրերը, որոնք կազմում են շուրջ60 գիրք, գրքույկ ու պրակ: Արդարև, խուսափելով այդ բանից, լուրհիշատակեմ մի քանի ևս հրատարակություններ, որոնք վերնագրով իսկ բնորոշում են ներհունու բազմավաստակ գիտնական բանասերի տքնության ժառանգությունը:

«Իրանի հայ եկեղեցիները» 1983 թ.

«Պատմություն Նոր Ջուղայի Ազգային ԵրկսեռԴպրոցների» 1985 թ. «Հայ ազգային տոները» 1988 թ.

«Գրչության արվեստը Նոր Ջուղայում» 1991 թ.

«Նոր Ջուղայի եկեղեցիները» 1992 թ.

«Իրանահայպարբերական մամուլը» 1994 թ.

«Նոր Ջուղայի թատրոնը» 1995 թ.

«Սպահանի հայոց թեմի առաջնորդները» 1996 թ.

«Բարեգործ ու մեկենաս ջուղայեցիները» 1997 թ. և այլն:

Լևոն Գ Մինասյանը իր մահկանացուն կնքեց 2012 թ դեկտեմբերի 31ին: Նոր Զուղայի ազգային մարմիններին է մնում տեր կանգնելու նրա գրական, պատմաբանասիրական և հսկայական արխիվին, ի պահ առնելով այն Նոր Զուղայի Սբ Ամենափրկիչ Վանքի Մատենադարանում:

Գլենդել, Կալիֆորնիա 2013-01-08

## Իսլ. մշակույթի և առաջնորդության նախարարության պատվիրակությունը շնորհատրական այցով՝ ազգային առաջնորդարանում



Հիւրերին ընդունեցին Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ արք. Սարգսեանը, Իսլ. խորհրդարանում Սպահանի և հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, Թ. Ն. Թեմական խորհրդի և ազգային իշխանութեան ներկայացուցիչները:

**Չորեքշաբթի, յունւարի 2-ին իսլ. մշակույթի և առաջնորդութեան նախարարի մշակութային հարցերով տեղակալ դոկտ. Ալի Էսմայիլին, նոյն նախարարութեան մշակութային աշխատանքների գերատեսուչ դոկտ. Մոհամմադեզա Վասֆին, նախարարութեան կրօնական փոքրամասնութիւնների գրասենեակի պատասխանատու Մաիդ Թաղաին և տարբեր բաժինների պատասխանատուներ Ամանորի և Ս. Շնդեան տօնի առիթով շնորհատրական այցով եղան ազգային առաջնորդարանում:**

Հիւրերին ընդունեցին Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ արք. Սարգսեանը, Իսլ. խորհրդարանում Սպահանի և հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ռոբերտ Բեգլարեանը, Թ. Ն. Թեմական խորհրդի և ազգային իշխանութեան ներկայացուցիչները: Հանդիպման սկզբում Սրբազան Հայրը ողջունելով հիւրերին՝ ասաց. «Նոր տարւայ առիթով իմ խօսքն եմ ուղղում իրանահայութեանը և Իրանի ժողովրդին, որի հիմնական բաժինը խաղաղութեան, սիրոյ և փոխադարձ յարգանքի գաղափարն է»: Սրբազան Հայրն իր արտայայտութիւնների մի այլ բաժնում կարեւորութեամբ անդրադարձաւ այն հանգամանքին, որ այսօր աշխարհի տագնապների մեծ մասի պատճառը կրօնի սխալ մեկնաբանութիւնն է և աւելացրեց. «Կրօնը ձգտում է

մարդու երջանկութեան և ոչ մի ժամանակ թշնամութիւն չի սերմանում»:

Սրբազան Հօր արտայայտութիւններից յետոյ՝ շնորհատրանքի խօսք ասաց դոկտ. Ալի Էսմայիլին: Հանդիպման աւարտին հիւրերն այցելեցին Ս. Սարգիս Եկեղեցի:

Իրանահայեր Լրատու ցանց

## Բալանիշ գիւղի Ս. Յովհաննէս Եկեղեցին հիմնովին վերանորոգւած

05/01/2013 22:14:00 Թարիզ, Ազգային Առաջնորդարան



Ուրբաթ 4 Յունւար 2013-ին, Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերայ. Տ. Գրիգոր Օ. Վրդ. Զիֆթճեանը այցելեց Ուրմիայից 25 քլմտ. հեռաւորութեամբ գտնուող Բալանիշ գիւղը, որը նշանաւոր է իր 17-րդ դարուց մնացած Ս. Յովհաննէս Եկեղեցիով: Թեմակալ Առաջնորդին ընկերակցում էին Պատգամաւորական Ժողովի Փոխ-Ատենապետ՝ Փայլակ Սահակեան, փոխատենադպիր՝ Վահիկ Բայրամեան, և Ուրմիայի Գործակալական Խորհրդի անդամ՝ Մանասէր Մուրադեան:

Անցած տարւայ ամրանը, եկեղեցին վերանորոգւեց, իբրեւ միակ յիշատակը յիշեալ գիւղի հայաշատ կեանքի: Եկեղեցու առաջին վերանորոգութիւնը կատարւել է 29 տարիներ առաջ, երբ հողաշէն ու փայտածածկ փլատակ կառոյցը հիմնովին վերանորոգւելով, աղիւսաշէն է դարձել, միայն զանգակատան երկյարկ կառոյցի միջին մասը գերանաշէն պահելով: Առաջին այս վերանորոգութեան աշխատանքներին իրենց մասնակցութիւնն են բերել, նոյն գիւղի զաւակներ՝ Մանասէր Մուրադեանս, Արմենակ Աւանէսեան և այժմ հանգուցեալ՝ Սարգիս Բաղալեան: Շինարարութեան առաջին աշխատանքների ընթացքում փակւել են եկեղեցու ներսում գտնուող երկու թոնիրները: Իսկ անկիւններում նոր սիւներ զետեղելու նպատակով բացւել է հիւսիս-արեւմտեան անկիւնում գտնուող հողաշէն անյայտ գերեզմանը, որի տակից, մէկ մէթոյ խորութեան, ի յայտ է եկել 1600-ական թւականները կրող նախնական խաչերով զարդարւած մի տապանաքար՝ Նուրիջան Տէր Պետրոսեանի պատկանող, որի ներքեւ յայտնաբերւել են



նրա աճիւնները: Սոյն տապանաքարը այժմ ծածկում է յիշեալ գերեզմանը:

Դէպի Հայաստան ներգաղթից առաջ, Բալանիշ գիւղը ունեցել է 60 տուն հայ բնակչութիւն: Դպրոց չի եղել գիւղում, սակայն մայրենի լեզուն նոր սերնդին իր տան մէջ ուսուցել է պրն. Սարգիս Ղուրպանեանը, իբրև դաստիարակ-ուսուցիչ: Գիւղի հայաթափումը տեղի է ունեցել առաջին եւ երկրորդ ներգաղթների ընթացքում, եւ ապա, երբ կամաց-կամաց դէպի Ուրմիա եւ շրջակայ քաղաքներ տեղափոխւել է ժողովուրդը:

Գիւղի տները նախկինում եկեղեցու շրջակայքում են եղել: Սակայն վարակիչ Թիֆո հիւանդութիւնը պատճառ է դարձել, որ տեղափոխւի ժողովուրդը մի քիչ անելի հեռու, այն համոզումով որ տեղից հեռանալուց յետոյ, հիւանդութիւնը կը կտրւի:

Հաւանական է, որ նոյն հիւանդութեան օրերին, երբ մահը անմեղ կեանքեր էր հնձում, գիւղում տարածւել է այն հաւատքը, թէ եկեղեցու մօտակայքում գտնուող թզնու երեք ծառերը՝ «Իւշ Պաճիլար» “Երեք Քոյրեր” կոչւած, բուժիչ յատկութիւն ունեն, եւ նրանց մօտ երթալով մոմ վառելը, կը բժշկի իրենց հիւանդներին: Այս մասին գիւղացիներին պատմել է Փիրէ Չօխա “գիւղապետ Փիրէ”, որը 110 տարի ապրելով, հաղորդել է իր իմացած պատմութիւնը «Երեք Քոյրեր»ի մասին: Այդ հին հաւատքով, մինչեւ այսօր Բալանիշցիներ գիւղ այցելելուն, մոմեր են վառում այդ ծառերի թմբացած արմատների ներքեւ, որոնց հետքերը պարզ երևում են:

Եկեղեցին, մինչեւ նորոգւելը, գիւղացիների կողմից ճանաչւել է «Խարապա Քիլիսէ» “Փլատակ Եկեղեցի” անունով, խարխլած կառոյցին պատճառով: Գիւղացիներ ասում են, թէ Քէթի Ֆիհրազատէ կոչւած անձը, գիւղի աղբիւրի մօտ մի տեսիլք է ունենում, եւ մի ձիաւոր իրեն ուղարկում է չորս աղջիկ ունեցող գիւղացու մօտ, ասելով որ տղայ երեխայ պիտի ունենայ, եւ անունը Յովհաննէս պիտի կոչեն: Երեխան ծնում է եւ անունը դնում են Յովհաննէս: Երբ պատանի է դառնում, բերում են եկեղեցի, ուխտի համար թողած երկար մազերը կտրում, եւ ապա մկրտում: Նոյն առիթով Ազգային Առաջնորդարանի արխիւները պրպտելով գտնում են, որ եկեղեցին «Խարապա Քիլիսէ» չի այլ՝ «Ս. Յովհաննէս» է կոչւում...:

Եկեղեցու երկրորդ վերանորոգութիւնը սկսւել է 2009 թին, իսկ վերջին երկու տարիների ընթացքում Բալանիշցի մայր ու որդի՝ Մերուժան եւ Ռիմա Ազարեանց, իրենց գիւղի նկատմամբ իբրև գուրգուրանքի արտայայտութիւն, իրենց իսկ ձեռքերով եւ ծախսով վերանորոգել են եկեղեցին:

Թեմակալ Առաջնորդը բարձր գնահատեց Ազարեանց մայր ու որդուն, որոնք ամէն օր այցելելով եկեղեցի, իրենց տան նման մաքուր ու կարգին են պահում այն, եւ աղօթում բոլորի համար: Հայր Սուրբը այս առիթով յայտնեց, թէ յառաջիկայ զարնան վերածումը պիտի կատարւի սոյն եկեղեցու, նախկին Բալանիշցիների ներկայութեան: Եկեղեցում աղօթք կատարելուց եւ հիւրասիրելուց յետոյ, Թեմակալ Առաջնորդը նաեւ

այցելեց Բալանիշի հանգստարանը եւ «Հոգուց» ասաց այնտեղ ննջողների համար:

Կար ժամանակ, երբ հայահոծ Բալանիշում յատկապէս Տաղաւար տօներին ու եկեղեցական կարեւոր օրերին եկեղեցական ու ազգային տօնախմբութիւն էր...: Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտութեան սրբազան տօների նախօրեակին, յատկապէս մեր Տիրոջ Մկրտչի՝ Ս. Յովհաննէսի անւան յիշատակին կառուցւած սոյն եկեղեցու պատերը հայ շարականների ու աղօթքների շունչով ջերմացան, մի օր կանխաւ ստանալով Ս. Ծննդեան անտիպը...:

**Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեան՝ «Խաղաղասեր եւ շինարար համայնք ենք եղել ատրպատականում, վկայ՝ մեր հարիւրաւոր տաճարները եւ մեր բարեխիղճ ժողովուրդը»**

06/01/2013 21:07:00Թարիզ, Ազգային Առաջնորդարան



Պետութեան ներկայացուցիչների՝ Նահանգապետի, Քաղաքապետի, Փոքրամասնութիւնների պետական բաժանմունքի եւ այլ բարձրաստիճան պաշտօնատարների ներկայութեան, 6 Յունւար 2013-ի առաւօտուն, Ս. Ծննդեան եւ Աստուածայայտութեան տօների առիթով, Բերդաթաղի (Ղալա) Ս. Աստուածածին Մայր Եկեղեցու մէջ մատուցած իր պատարագի ընթացքում, Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեան ասաց. «Խաղաղասեր եւ շինարար համայնք ենք եղել Ատրպատականում, վկայ՝ մեր հարիւրաւոր տաճարները եւ մեր բարեխիղճ ժողովուրդը»:

Թեմակալ Առաջնորդը Քրիստոսի Աստուածայայտութիւնը բացատրելով, ցոյց տուեց թէ Աստուած ինչպէս իր Խաղաղութեան Իշխանին աշխարհ ուղարկեց, քաջ իմանալով որ իր ստեղծած մարդկութեան համար ամենէց էականը խաղաղութիւնն է: Որովհետեւ մարդիկ գնալով անելի կարիքը պիտի զգային խաղաղութեան, իրար նկատմամբ անհանդուրժող բնատրոյթեան պատճառով:

«Հնում մարդիկ հաւատում էին, թէ աշխարհի երկնակամարը սիւների վրայ է կանգնած: Երկրի

ձգողական ուժը ծանօթ չէր ժամանակի գիտութեան: Այսօր երբ տիեզերքի մոլորակային դրութեան ծանօթ ենք, տեսնում ենք, որ աշխարհը դարձեալ սիների կարիք ունի, իր գոյութիւնը պահպանելու համար: Այդ սիների ամենից անհրաժեշտը եւ կենտրոնականը Խաղաղութիւնն է, որը բացակայում է շատ տեղերում, քառս ստեղծելով մարդկութեան կեանքում» ասաց Հայր Սուրբը:

Ի վերջոյ, իր պատգամի երրորդ բաժնում Ատրպատականի Առաջնորդը ասաց, թէ «այն նաւը, որի մէջ գտնուում ենք բոլորս, ունի մի Նաւապետ, որը անվարան կարող է այդ նաւը տանել խաղաղութեան նաւահանգիստ, որովհետեւ նա ինքը Խաղաղութեան Իշխանն է այդ նաւի ղեկը իր ձեռքում ունեցող Բարի Նաւապետը: Ուստի վստահենք Իրեն, որպէսզի առաջնորդւենք դէպի ցանկալի խաղաղութիւն»:

Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց «Կոմիտաս» Երգչախումբը, ղեկավարութեամբ երաժիշտ-խմբավար՝ Վարդան Վահրամեանի: Թեմի ժողովական գոյգ կառոյցների անդամների հետ, մեծ թիւով հաւատացեալներ մասնակից դարձան Ս. Ծննդեան եւ Աստուածայայտութեան տօնին:

Հաւատացեալ ժողովրդի կողքին, ներկայ էին պետական պատասխանատուներ՝ Թարիզի քաղաքապետ Ալի Ռեզա Նաւինի ներկայացուցիչ՝ 8-րդ քաղամասի քաղաքապետ Մուդաբբեր, Քաղաքապետական Խորհրդի Ընդհ. Քատուղար Սէյէդ Ալեւի, Փոքրամասնութիւնների բաժանմունքի պատասխանատու Հոսէյն Մուսաւի եւ Խոտայի, Իսլամական Մարդկային Իրաւանց Բաժանմունքի վարիչ՝ Քազեմ Զադէ մի խումբ պատւիրակութեան ընկերակցութեամբ, Քաղաքապետարանի Մշակութային եւ հասարակական բաժնի պատասխանատու Դոկտ. Վեհիդ Մեհր, Թարիզի Համալսարանի ռեկտոր՝ Դոկտ. Շեհլաֆեր եւ Հայաստան-Իրան Բարեկամութեան Հիմնարկի վարիչ՝ Նազիֆ:

Ս. Պատարագի արարտին կատարեց Քրիստոսի Մկրտութեան կարգը, խաչքաւոր երեխաների մասնակցութեամբ: Խաչահանգիստը կատարելուց առաջ, Գրիգոր Ծ. Վարդապետ ջուրը օրհնեց Ս. Յովհաննէս Մկրտչի Աջով, որը յատկապէս դուրս էր բերել Թեմի գանձատնից, այս ջրօրհնէքի առիթով:

Եկեղեցական արարողութիւններից յետոյ, եկեղեցու դահլիճում հանդիպում տեղի ունեցաւ Թեմակալ Առաջնորդի եւ պետական ներկայացուցիչների միջեւ, մասնակցութեամբ Ազգային Իշխանութեան անդամների: Պետութեան պատասխանատուները իրենց բարեմաղթութիւնները փոխանցեցին Հայ Համայնքին, Ս. Ծննդեան Տօնին առիթով, գնահատելով հայութեան օրինակելի քաղաքացիներ լինելը, եւ երկրի բարգաւաճման բերած նպաստը: Ապա, Վեհիդ Մեհր, քաղաքապետի անունից յուշանւերով պատուեց Հայր Սուրբին, շնորհաւորելով հայ համայնքի Ս. Ծննդեան տօնը:

Յայտնենք, որ Ուրմիայի Ս. Ստեփանոս Եկեղեցում Ս. Ծննդեան պատարագը մատուցեց ծխատէր՝ Արժ. Տ.

Ներսէս Քինյ. Պատիւեանը, ներկայութեամբ հոծ թիւով հաւատացեալների: Ս. Պատարագից յետոյ կատարեց Ջրօրհնէք:

Եկեղեցական արարողութիւնների ընթացքում բնականոն երթեւեկութեան համար պետական ապահովութեան խորհուրդը ինչպէս նաեւ ոստիկանութիւնը մեծ դիւրութիւններ ընծայեցին հայ համայնքի գաւակներին: Նոյն օր երեկոյեան, Թեմակալ Առաջնորդը եւ Ազգային իշխանութիւնը Թարիզի Ազգային Առաջնորդարանի «Էմիլ Յակոբեան» Դահլիճում, իսկ Ուրմիայի Գործակալական Խորհուրդը եւ ծխատէր քահանան Ս. Ստեփանոս Եկեղեցու սրահում, թեմի կեանքում գործող միութիւնների, կազմակերպութիւնների եւ ժողովրդի շնորհաւորութիւնները:

**Երեւանի իշխանապետութիւնը**



**ԱՃ նիստերից ամենաշատ բացակայող պատգամավորների «Թոփ 10-յակը» գլխավորում է Գագիկ Ծառուկյանը**

17 Դեկտեմբերի 2012 - 18:42

*Հստ Parliamentmonitoring.am կայքի ԱՃ նիստերից ամենաշատ բացակայող պատգամավորների «Թոփ 10-յակը» գլխավորում է ԲՀԿ առաջնորդ եւ խորհրդարանում ԲՀԿ խմբակցության նախագահ Գագիկ Ծառուկյանը:*

Նա արդեն հասցրել է ԱՃ նիստերից բացակել 56 անգամ: Նրան հաջորդում է ՀԱԿ խմբակցության պատգամավոր Ստեփան Դեմիրճյանը՝ բացակայելով 49 անգամ: Նշենք, որ ի տարբերություն Գագիկ Ծառուկյանի, Ստեփան Դեմիրճյանի բացակայությունների պատճառի մասին բոլորին է հայտնի. նա ունի առողջական խնդիրներ:

ԲՀԿ քվոտայով ԱՃ-ում հայտնված Գուրգեն Արսենյանը բացակայել է 46 անգամ՝ զբաղեցնելով «Թոփ 10-յակի» 3-րդ հորիզոնականը:

ԲՀԿ խմբակցության պատգամավոր Մուրադ Գուլոյանը նույնպէս հայտնվել է ամենից շատ բացակայող պատգամավորների շարքում: Նա ԱՃ նիստերին չի ներկայացել 37 անգամ:

Նրան հաջորդում է ՀՀԿ-ական Կարո Կարապետյանը՝ բացակայելով 36 անգամ: «Թոփ 10-յակի» հաջորդ հորիզոնականում է ԲՀԿ-ական Արրահամ Մանուկյանը:

Նա ԱԺ չի ներկայացել 27 անգամ: 26 անգամ էլ չի ներկայացել ԲՀԿ խմբակցության պատգամավոր Մելիք Մանուկյանը:

ՀԱԿ խմբակցության պատգամավոր Արամ Մանուկյանն էլ է տեղ գտել այս տասնյակում: Նա բացակայել է 23 անգամ: Նրան հաջորդում է անկուսակցական Արայիկ Գրիգորյանը՝ բացակայելով 21 անգամ:

Այս 10-յակը եզրափակում է ՀՀԿ-ական արդեն նախկին պատգամավոր Ռուբեն Հայրապետյանը: Նա մայիսի 6-ին թիվ 1 ընտրատարծքից ընտրվելուց մինչև իր հրաժարական ներկայացնելը չի ներկայացել ԱԺ:

## Երևան քաղաքում հայտնաբերվել է 179 հանցավոր խումբ. ոստիկանության

12 Հունվարի 2013



Հունվարի 11-ին ոստիկանության կոլեգիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Երևան քաղաքի վարչության և տարածքային բաժինների 2012 թվականի գործունեության արդյունքների ամփոփումը:

Խորհրդակցությունը վարում էր ոստիկանության պետ, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Գասպարյանը: Հաշվետու շրջանի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետ Ներսես Նազարյանը: 2012 թ. մայրաքաղաքում գրանցվել է 7677 հանցագործություն, որը 697 դեպքով կամ 8.3%-ով պակաս է նախորդ տարվանից, այդ թվում՝ ծանր հանցադեպերի քանակը նվազել է 950 դեպքով, իսկ առանձնապես ծանրերը՝ 305-ով: 921 դեպքով կամ 15.3%-ով նվազել են քրեական հետախուզության գծով հաշվառված հանցագործությունները: Անձի դեմ ուղղված հանցագործություններն աճել են 452-ով կամ 29.6%-ով, 111 դեպքով աճել են մարմնական վնասվածք հասցնելու դեպքերը, ծանր մարմնական վնասվածքների թիվը նվազել է 2-ով: Դիտավորյալ սպանությունների թիվը մնացել է անփոփոխ՝ 19, իսկ սպանության փորձերը նվազել են 1-ով: 2012 թ. նախկին տարիների կասեցված քրեական գործերով բացահայտման ընդհանուր թիվն աճել է 81-ով կամ 16.8%-ով, ընդ որում վերոհիշյալ բացահայտված գործերից միայն 52-ը կասեցված էին հանցագործություն կատարողի անձը հայտնի չլինելու պատճառով:

Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակաշրջանում

Երևան քաղաքում հայտնաբերվել է 179 հանցավոր խումբ՝ 492 անձով, որոնց կողմից կատարվել է 541 հանցագործություն:

Վլադիմիր Գասպարյանը դրական գնահատեց Երևանի կայազորի աշխատանքն անցած տարում և նախանշեց 2013 թվականի ծրագրի հիմնական ուղղությունները: Խորհրդակցության ընթացքում տեղի ունեցավ առարկայական քննարկում՝ մանրամասն վերլուծվեցին հանցավորության դեմ պայքարի և հասարակական կարգի պահպանման ուղղությամբ ստորաբաժանումների իրականացրած գործողությունները, հասարակական հնչողություն ստացած հանցագործությունների բացահայտման ընթացքը, ոստիկանության մայրաքաղաքային կառույցում առկա թերացումներն ու բացթողումները, կադրային, կազմակերպչական և մի շարք այլ խնդիրներ: Ավարտին ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանը խորհրդակցության մասնակիցներին տվեց համապատասխան ցուցումներ և կոնկրետ հանձնարարականներ:



## Տրվեց Իրան-Հայաստան երկաթուղու և մայրուղու ծրագրերի մեկնարկը

18 Հունվարի 2013 - 13:13

Այսօր տրվեց «Հայաստանի հարավային երկաթուղի» և «Հայաստանի արագընթաց ճանապարհ» ծրագրերի մեկնարկը:

Ստորագրվեց կոնցեսիոն պայմանագիր, որի համաձայն՝ «Ռոսիա ՖՁԷ» ներդրումային ընկերությունը պարտավորվում է իրականացնել «Հայաստանի հարավային երկաթուղի» և «Հարավային արագընթաց ճանապարհ» ծրագրերի ֆինանսավորումը, նախագծումը, շահագործումը՝ շինարարության ավարտից հետո 30 տարի շահագործման նպատակով:

Նշենք, որ շուրջ 3 միլիարդ դոլար արժողությամբ տարածաշրջանային նշանակության այս երկու ծրագրերի իրականացման արդյունքում ունենալու ենք Սև ծովի նավահանգստից դեպի Պարսից ծոցի նավահանգիստներ կատարվող փոխադրումների ամենակարճ երթուղին: Այն կամրապնդի Հայաստանի տնտեսությունը ապահովելով միջազգային

Ժամանակակից հաղորդակցություն:

Ինչպես նշեց ՀՀ Տրանսպորտի և Կապի նախարար Գագիկ Բեգլարյանը՝ այս ճանապարհահատվածը տնտեսական առումով մեծ նշանակություն է ունենալու Հայաստանի համար: Այն ձգվելու է Մեդրիից մինչև Գագարին:

**Արցախի Հանրապետություն**

**Աղբբեջանը 68.700 կրակոց է արձակել Արցախի Հանրապետության ուղղությամբ**

29 Դեկտեմբերի 2012 - 16:22

Ըստ ՊԲ օպերատիվ տվյալների ամփոփագրի՝ 2012թ. ընթացքում դարաբաղա-աղբբեջանական հակամարտ գործերի շփման գծում հակառակորդի կողմից հրադադարի պահպանման ռեժիմը խախտվել է շուրջ 14.000 անգամ, որի ընթացքում, տարբեր տեսակի հրաձգային զինատեսակներից, հայ դիրքապահների ուղղությամբ արձակվել է ավելի քան 68.700 կրակոց: Հակառակորդի կողմից հրադադարի պահպանման ռեժիմի խախտման ինտենսիվություն հատկապես նկատվել է պետական նշանակության միջոցառումների եւ տոն օրերի ժամանակ ու դրանց նախորդած շրջանում: Չնայած հակառակորդի դրսեւորած այսօրինակ ակտիվությանը, ՊԲ առաջապահ զորամասերը ողջ տարվա ընթացքում հավատարիմ են մնացել հրադադարի պահպանման ռեժիմին եւ լիովին վերահսկել իրավիճակը հակառակորդի հետ շփման գծում՝ հարկ եղած դեպքում ձեռնարկելով նաեւ կանխարգելիչ գործողություններ եւ ստիպելով վերջինիս հրաժարվել իր նկրտումներից:

**Արեւմտյան Հայաստան**



**Դիարբեքիի հայ բողոքականները հետ են պահանջում իրենց եկեղեցին**

29 Դեկտեմբերի 2012

Թուրքիայի հայ բողոքականները պահանջում են իրենց վերադարձնել պետության կողմից խլված Դիարբեքիի (Աղձնիք գավառ) բողոքական եկեղեցին: Այս մասին տեղեկացնում է թուրքական «Իհլաս» գործակալությունը:

Դիարբեքիի հայ բողոքական Սուրբ Փրկիչ եկեղեցին անցել էր Թուրքիային 1983 թվականին: «Եթե մուսուլմանները Եվրոպայում տեսնեն նման վիճակում գտնվող մզկիթ, ապա նրանց սիրտը կցավի: Մեր սիրտն էլ ցավում է այս վիճակում գտնվող մեր եկեղեցու համար»,-նշել է Ահմեթ Գյուվեները, ով հանդիսանում է բողոքական եկեղեցու հոգևոր առաջնորդը:

«Մեր եկեղեցին մի քանի տասնյակ հետևորդ ունի, իսկ պետությունն այն փակել էր հետևորդներ չունենալու համար: Մենք ցանկանում ենք վայր, որտեղ կարող ենք աղոթել: Արդեն դիմում ենք ներկայացրել եկեղեցին հետ վերադարձնելու պահանջով»,-հավելել է Գյուվեները:

**Ստամբուլում դաժանորեն տարեց հայուհու են սպանել**



29 Դեկտեմբերի 2012 - 11:44

Ստամբուլում տարեց հայ կին է դաժանաբար սպանվել, փոխանցում է թուրքական «Դոդան» գործակալությունը: Թուրքիայի խոշորագույն քաղաքի Տաթիի թաղամասում դեկտեմբերի 28-ի երեկոյան հայտնաբերվել է տարեց կնոջ մարմին՝ դանակից հասցված բազմաթիվ վնասվածքներով: Պարզվել է, որ սպանվածը Թուրքիայի հայազգի քաղաքացի, 84-ամյա Մարիսա Քուչուքն է:

Նրա անշունչ մարմինը հայտնաբերել է որդին, երբ երեկոյան այցելել է մոր բնակարան:

Փորձաքննությունը ցույց է տվել, որ տարեց կնոջ հասցվել է դանակի 7 հարված, ինչպես նաև կտրել են նրա կոկորդը:

Մարիսան, ով միայնակ էր ապրում իր բնակարանում, 4 երեխաների մայր էր: Ներկայում թուրքական ոստիկանությունը հետաքննություն է սկսել՝ հայտնաբերելու մարդասպանին: Դեռ հայտնի չէ, թե ինչը կարող էր սպանության պատճառ դառնալ:

HayNews.am



## Հայազգի ուսուցչի դաժան սպանությունը

### Ստամբուլում

11 Հունվարի 2013 - 17:06

**Ստամբուլի հայկական դպրոցների մեկում աշխատող հայ ուսուցիչը դաժանաբար սպանվել է սեփական բնակարանում, փոխանցում է թուրքական «Բիլաս» գործակալությունը:**

Ստամբուլի Քաղըքայնի շրջանի հայկական դպրոցում աշխատող հայ ուսուցիչ Իլքեր Շահինի անշունչ մարմինը գտել են բնակարանում:

Նրա գործընկերները շուրջ երեք օր ոչ մի նորություն չեն ունեցել Շահինի մասին և որոշել են այցելել նրան: Գալով նրա բնակարան և փակ գտնելով դուռը՝ նրանք ուսուցչի մարմինը են դիմել:

Երբ ոստիկանները ներս են մտել, տեսել են հայ ուսուցչի կտրված կոկորդով դին: Նախնական ենթադրությամբ՝ հայ ուսուցիչը դիմադրել է մարդասպանին, որը, ըստ ամենայնի, գողության նպատակով չի ներխուժել նրա բնակարան:

Հայտնի է նաև, որ նրա վերջին գործողությունն է եղել կոլեգաներին Սուրբ ծնունդի կապակցությամբ շնորհավորանք ուղարկելը: 40-ամյա Շահինը, ով մեկ դուստր ուներ, 9 տարի շարունակ դասավանդում էր հայկական դպրոցում: Նշենք, որ Ամանորի նախօրեին Ստամբուլում սպանվել էր տարեց մի հայուհի: Կնոջը սպանել էին՝ կտրելով կոկորդը:

HayNews.am

## Միջազգային

### Բաքվի ջարդերը սկսվել են դեռևս 1988-ից և ավարտին հասցվել 1990-ի հունվարի 13-19-ը

12 Հունվարի 2013 - 15:22

1990-ի հունվարին 13-ին Բաքվում ադրբեջանական իշխանությունների կողմից գործի դրվեց հայերի գանգվածային սպանությունների և տեղահանության

նախապես մշակված ծրագիրը, որը դադարեցվեց միայն մեկ շաբաթ հետո:

Սա այն փաստարկը, որը սովորաբար առաջ է քաշվում, ինչի հետ սակայն համաձայն չէ պատմաբան Գևորգ Մելքոնյանը. «Շրջանառվող տվյալները, թե Բաքվի ջարդերը սկսել են 1990-ի հունվարի 13-ին և շարունակվել մինչև 19-ը, այդքան էլ ճիշտ չեն: Ջարդերը սկսվել են դեռևս 1988-ից և ավարտին հասցվել 1990-ի հունվարի 13-19-ը: Ադրբեջանական իշխանության նման քայլը պատասխանն էր ԼՂՀ հայերի ինքնորոշման ձեռքբերմանը»:

Ըստ պատմաբանի իրականությանը չեն հասնապատասխանում նաև Բաքվի ջարդի ժամանակ գոհված հայերի թիվը. խոսվում է մոտ 300 գոհվածի մասին, մինչդեռ եթե ստուգվի ադրբեջանական փաստաթղթերը՝ գոհերի թիվը կհասնի 500-ի սահմանին: Այս համատեքստում, Գևորգ Մելքոնյանն ակնարկում է, թե հայկական կողմից բավարար քայլեր չեն ձեռնարկվում՝ միջազգային հանրությանը ապացուցելու, որ Բաքվի և դրանից առաջ Սումգայիթի դեպքերը Ադրբեջանի կողմից պետականորեն մշակված ցեղասպան ծրագիր էր և ոչ թե մի քանի խուլիգանի նախաձեռնություն:

«Կատարվածը Բաքվում բնակվող 250 000 հայ բնակչության դեմ ուղղված քաղաքական քայլ էր և քանի դեռ Բաքվի և Սումգայիթի դեպքերը դատապարտված չեն, ավելին՝ խնդիրը չի ստացել իրավական կարգավորում՝ չենք կարող ապահովված լինել, թե Բաքուն ցանկացած պահի չի գնա նույն քայլին: Այսօր Հայաստանի խնդիրը միջազգային հանրությանը Բաքվի ջարդերի հետ կապված բոլոր փաստաթղթերին ծանոթացնելն է և ևս մեկ անգամ փաստելը, որ բացառվում է ԼՂՀ հայության ճակատագիրը Ադրբեջանին հանձնելը: Իհարկե, այս հարցում խնդիրներ կան, քանի որ մեր ձեռքի տակ եղած փաստաթղթերը միայն ռուսերեն լեզվով են, բայց կան նաև անգլերեն լուրջ փաստաթղթեր, որոնք պետք է թարգմանվեն: Կարծում եմ Միլոշեվիցի իր ներուժը պետք է ուղղի նաև Ադրբեջանի իրագործած ցեղասպանությունների բարձրաձայնմանը», - շեշտեց պատմաբանը:

Իր հերթին հանդիպմանը ներկա միջազգային իրավունքի մասնագետ Տարոն Միմոնյանը նկատեց, թե ՀՀ-ն չի կարող ասենք Հազարամյա դատարան դիմել մինչև Ադրբեջանը չտա իր համաձայնությունը և չընդունի այդ մարմնի իրավասությունն այս գործով:

### Իրանցիները դեմ են «Ադրբեջանի հանրապետություն» անվանմանը

12 Հունվարի 2013 - 13:20

Իրանագետ Վարդան Ոսկանյանն այսօր լրագրողներ հետ հանդիպմանը հայտնեց, որ վերջերս Ատրպատականի բնակիչների մի մեծ հատված կոչ-դիմումով դիմել է իրանական իշխանություններին, որպեսզի միջոցներ ձեռք առնվեն Արաքսից հյուսիս ընկած տարածքը կամ

Ադրբեջանական Հանրապետության տարածքը Ադրբեջան չկոչելու համար: Նրա խոսքով Ատրպատականի ժողովրդի այդ նախաձեռնությանը միացել են տեղի 100-ից ավելի մտավորականներ:

«Ադրբեջանի անվանումն արհեստական է: 1918թ.-ից ի վեր Արաքսից հյուսիս և Կուրից արևելք ընկած տարածքը, որը մեզ մոտ հայտնի է Աղվանք անունով, ռուսների մոտ Կովկասյան Ալբանիա, երբևիցե չի կոչվել Ադրբեջան, և Արաքսից հյուսիս ընկած տարածքը երբեք չի կոչվել Ատրպատական, այլ Արաքսից հարավ ընկած տարածքի անվանումն է Ատրպատական: Դա մեզ հայտնի է սկսած հինգերորդ դարից», - ասաց նա:



Նրա ներկայացմամբ՝ 1918թ.-ին որոշվել է իրանական նահանգի անվանումը վերցնել և օգտագործել որպես նորաստեղծ հանրապետության անվանում այն նկատառումով, որ հետագայում Արաքսից հարավ ընկած տարածքներն էլ պետք է միավորվեն այդ հանրապետությանը:

«Խորհրդային տարիներին այս գաղափարը ևս առաջ էր մղվում համապատասխան մարմինների կողմից, և Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Իրանի հյուսիսում փորձ կատարվեց ստեղծելու այսպես ասած Ադրբեջանի Դեմոկրատական հանրապետություն, որը երկար կյանք չունեցավ, քանի որ իրանական զորքերը մուտք գործեցին այդ տարածք: Հետագայում՝ 1991թ.-ին, երբ տեղի ունեցավ Խորհրդային Միության պահպանման վերաբերյալ հանրաքվե, Ադրբեջանի բնակչությունը կողմ էր նրա պահպանմանը: Անկախանալուց հետո այդ հանրապետությունն անվանվեց Ադրբեջանական Հանրապետություն, որը տարբերվում է մյուս հանրապետությունների անվանումից: Օրինակ՝ մենք չենք ասում Հայկական Հանրապետություն, այլ՝ Հայաստանի Հանրապետություն: Իրանական իշխանություններն այդ ժամանակ չքոքողեցին այդ անվանման վերաբերյալ», - նշեց նա: Իրանագետը անդրադարձավ նաև նախադեպերին՝ նշելով. «Մակեդոնիայի դեպքում

Հունաստանը բողոքեց, քանի որ Մակեդոնիան օգտագործում էր հունական նահանգի անվանումը, և այժմ Մակեդոնիայի անվանումը Նախկին Հարավսլավական Հանրապետություն Մակեդոնիա է (ՆՀՀ Մակեդոնիա)»:

**ԱՄՆ-ում դատարանը որոշում է կայացրել Հայոց ցեղասպանության զոհերի ժառանգների փոխհատուցման գործով**



**Դեկտեմբեր 12, 2012**


ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի շրջանային դատավորն անցած շաբաթ որոշում է կայացրել, ըստ որի հաշվապահական ընկերությունը կարող է դադարեցնել Հայոց ցեղասպանության զոհերի 16 ժառանգների հետ կապվելու անհաջող ջանքերը՝ ապահովագրական հիմնադրամից վճարումներ կատարելու համար, հաղորդում է «Glendale News-Press»-ը:

Դատավոր Քրիսթինա Մնայդերն ասել է, որ «Holthouse Carlin and Van Trigt» ընկերության բազմաթիվ փորձերը՝ հասնել 159 հայցվորից կազմված վերջին խմբին, բավարար են: Հաշվի վրա մնացել է 500 հազար դոլարից էլ քիչ գումար: Ըստ որոշման՝ փաստաբաններ Մարկ Գիրագոսը, Բրայան Կաբատեկը և Ռոման Զիլբերֆելդը կարող են ծախսել մինչև 15 հազ. դոլար՝ չպատասխանող հայցվորներին գտնելու վրա:

Այդ նպատակով ֆրանսիական ապահովագրական «Axa S.A.» ընկերության հատկացված միջոցները պետք է մնան փոխհատուցման հիմնադրամում: Դատավորի որոշման համաձայն՝ ներկայումս մահացած չորս հայցվորների համար նախատեսված գումարները պետք է տրվեն նրանց ժառանգներին, եթե վերջիններս կարողանան ապացուցել, որ ժառանգ են հանդիսանում:

